

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՆԱԻՐԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՇԱՉԻԼՎՅԱՆ**

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԺԽՏՄԱՆ ԿԱՐԳԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՍԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2012**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յու. Մ. Գաբրիելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Գ. Աստվածատրյան

բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Ն. Մկրտչյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. ապրիլի 20-ին, ժամը 15.00-ին Երևանի պետական համալսարանի 009 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2012 թ. մարտի 19-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
Բ.Գ.Թ., պրոֆեսոր՝

Ե. Լ. Երզնկյան

Ժամանակակից գերմաներենի տիպաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունն այսօր լայն թափ է ստացել, և մինչ այժմ հրատարակվել ու հրատարակվում են դրանց վերաբերյալ տարբեր բնույթի բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց թվում նաև այնպիսիք, որ անդրադառնում են նաև ժխտման լեզվական կարգին: Հարկ է նշել, որ եղած տիպաբանական ուսումնասիրությունները հիմնականում զուգադրական աշխատանքներ են, իսկ զուգադրումը թեև բացահայտում է կոնկրետ լեզվի յուրահատկությունները (դա մասամբ կատարվում է նաև սույն աշխատանքում), սակայն այդ դեպքում ելակետային լեզվի ոչ բոլոր առանձնահատկություններն են բացահայտվում (վերջինս կախված է զուգադրվող լեզվից): Այդ իսկ պատճառով սույն աշխատանքում փորձ է արվել գերմաներենի ժխտման կարգի տիպաբանական յուրահատկությունները բացահայտել առավելապես ներլեզվական օրինաչափությունների հիման վրա, իսկ հայերենի փաստերը ներգրավված են միայն գերմաներենին բնորոշ յուրահատկությունները մեկնաբանելու նպատակով: Ընդ որում, մեր մայրենի լեզվի փաստերի ներգրավումը այստեղ աննախադեպ է, քանի որ վերջինս, ինչպես ստորև կտեսնենք, հանգեցնում է հետաքրքիր արդյունքների: Ընդհանուր առմամբ, լեզուների տիպաբանական ուսումնասիրությունը կատարվում է ըստ երկու սկզբունքների՝ հարցաթերթային և չափանմուշային: Առաջին սկզբունքի դեպքում առաջնային է դիտվում այն հատկանիշների ամբողջությունը, որոնք բնութագրում են կոնկրետ լեզուն: Երկրորդ սկզբունքի դեպքում ընտրվում է այն լեզուն, որի առանձնահատկություններից էլնելով բնութագրվում է մյուս լեզուն (կամ լեզուները): Այսպիսով, չափանմուշ-լեզուն ներկայացնում է կանոնների համակարգ, որի հիման վրա կարելի է կառուցել ցանկացած նկարագրություն<sup>1</sup>: Սույն աշխատանքում գործադրված են երկու սկզբունքները միաժամանակ. գերմաներենի ժխտման կարգի տիպաբանական յուրահատկությունները ներկայացվում են ինչպես ներլեզվական յուրահատկությունների, այնպես էլ հայերենի համապատասխան փաստերի հետ զուգադրմամբ:

Չնայած ժխտման կարգը եղել է տարբեր բնագավառների մասնագետների ուշադրության կենտրոնում, և նրանք իրենց աշխատություններում պարզաբանել են ժխտման արտահայտման միջոցները, բացահայտ միջոցների կողքին կարևորել նաև ոչ բացահայտ միջոցների ուսումնասիրությունը<sup>2</sup>,

---

<sup>1</sup> Գաբրիելյան Յու. Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, էջ 5-6:

<sup>2</sup> Blühdorn H. Negation im Deutschen: Syntax, Prosodie, Semantik. Tübingen, Narr G., 2009; Adamzik K. Probleme der Negation im Deutschen. Studien zur zeitgenössischen Grammatikographie. Münster, Nodus, 1987; Qjan M. Untersuchungen zur Negation in der deutschen Gegenwartssprache. Heidelberg, Groos, 1987; Nozsicska A. Die Grammatik der Negation.

այնուամենայնիվ դեռևս չկան այնպիսի ուսումնասիրություններ, որոնցում ներկայացված լինեն ժխտման կարգի արտահայտման բացահայտ և ոչ բացահայտ բազմամակարդակ միջոցները որպես մեկ ընդհանուր համակարգի բաղկացուցիչ տարրեր: Բացի այդ, լեզվաբանության զարգացման արդի փուլում հնարավորություն է ստեղծվում ժխտման կարգը այլ տեսանկյունից ուսումնասիրելու, ինչպես նաև եղած ուսումնասիրությունները լեզվաբանական նորագույն տեսությունների լույսի ներքո քննելու՝ գնահատվածը վերագնահատելու համար: Այժմ, երբ լեզվական երևույթները քննվում են ոչ միայն ավանդական-ձևախմբատային, այլ նաև իմաստագործառական սկզբունքներով, երբ լեզվական երևույթների ուսումնասիրումը արժևորվում է լեզու և խոսք փոխհարաբերության տեսանկյունից, փաստական նյութի առկայությունը հնարավորություն է ընձեռում ձևավորված տեսակետները տեղափոխել նոր արժեքային համակարգ, ամփոփել ժխտման կարգի ուսումնասիրված վիճակը, վեր հանել մի շարք խնդիրներ և վերագնահատել դրանք լեզվաբանական նոր տեսությունների համաձայն, համակողմանիորեն ուսումնասիրել գերմաներենի ժխտման արտահայտության տարաբնույթ բառային և քերականական միջոցների կառուցվածքային-իմաստաբանական առանձնահատկությունները:

**Թեմայի արդիականությունը:** Նկատի ունենալով, որ լեզուների ժամանակակից ուսումնասիրությունների համար այսօր կարևորվում են ոչ միայն գործաբանական ու միջնակութային հարորդակցման, այլև տիպաբանական տեսությունները, սույն աշխատության թեման արդիական է այն առումով, որ կոնկրետ լեզվի ուսումնասիրության տեսական և գործնական խնդիրները առավել արդյունավետ համատեղվում են տիպաբանական բնույթի հետազոտություններում: Բացի այդ, տիպաբանական ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում հասնել լեզվական երևույթների տարբեր առանձնահատկությունների առավել ընդհանրացմանը, ինչը մեծապես նպաստում է նաև լեզուների գործնական ուսումնասիրությանը: Այլ կերպ՝ կոնկրետ լեզվի գործնական ուսուցման գործընթացում զուգահեռ դիտարկվում են նաև այլ լեզուների (հատկապես մայրենի լեզվի) համապատասխան երևույթները, որի արդյունքում ի հայտ են գալիս քննարկվող լեզվական իրողության խորքային յուրահատկությունները ևս: Ասվածը ամբողջությամբ վերաբերում է նաև

---

Wien, Österreichische Akademie der Wissenschaften, 1988; Gabrielyan J. Zur Negierung im Deutschen und Armenischen // Deutsche Sprache, 2007, №2, S. 141-150; Heinemann W. Negation und Negierung. Handlungstheoretische Aspekte einer linguistischen Kategorie. Leipzig, Enzyklopädie, 1983; Helbig G., Ricken H. Die Negation. Leipzig, VEB Verlag Enzyklopädie, 1973; Jäger A. History of German Negation, Amsterdam, Benjamins, 2008.

գերմաներենի ժխտման կարգին, որին նշված սկզբունքներով անդրադառնում է սույն աշխատանքը:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:** Աշխատանքի նպատակն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել ժամանակակից գերմաներենի ժխտման կարգի արտահայտման բացահայտ և ոչ բացահայտ բազմամակարդակ միջոցները, ինչպես նաև համատեքստում ժխտման կարգի իրացման առանձնահատկությունները՝ առանձին դեպքերում ներառելով նաև հայերենի համապատասխան փաստերը:

Վերոհիշյալը փորձ է արվել իրականացնել հետևյալ խնդիրների պարզաբանմամբ.

- հնարավորինս ամբողջական ներկայացնել ժխտման կարգի էության վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական դրույթները,
- տիպաբանության սկզբունքներով վերլուծության ենթարկել լեզվական տարբեր մակարդակներում առկա ժխտման կարգի արտահայտման բացահայտ և ոչ բացահայտ միջոցները և պարզաբանել դրանց իմաստագործառական առանձնահատկությունները,
- բացահայտել ժխտման արտահայտման ոչ բացահայտ միջոցների ոճական նրբիմաստները,
- ճշտել գործառական տեսակետից ժխտական նշանակության ծավալը, այդ նպատակով քննարկել նաև համատեքստային տվյալները հաշվի առնելով հարալեզվական և արտալեզվական գործոնների դերը,
- ուսումնասիրել համատեքստում ժխտման կարգի իրացման առանձնահատկությունները:

**Գիտական նորույթը:** Ուսումնասիրության մեջ **առաջին անգամ** փորձ է արվել մի կողմից՝ իմաստագործառական տեսանկյունով դիտարկելով գերմաներենի ժխտման կարգի արտահայտման բացահայտ և ոչ բացահայտ միջոցները լեզվական տարբեր մակարդակներում՝ կատարել գերմաներենի ժխտման համակարգի համալիր քննություն, մյուս կողմից՝ ներկայացնել գերմաներենի ժխտման կարգի տիպաբանական յուրահատկությունները արդի տիպաբանական լեզվաբանական նորագույն տեսությունների, մասնավորապես՝ չափանմուշային և հարցաթերթային սկզբունքների միաժամանակյա գործադրման տեսության դրույթների հիման վրա: Այստեղ որպես չափանմուշ-լեզու հանդես է գալիս հայերենը: Ընդ որում, համապատասխան վերլուծություններում, թեև ոչ համակարգային մոտեցմամբ, հայերենի փաստերի ներգրավումը նպաստում է գերմաներենի ժխտման կարգի էության առավել արդյունավետ քննարկմանը, ժխտման կարգի արտահայտման միջոցների առավել ամբողջական լեզվաբանական բնութագրմանը, ինչպես նաև ժխտման կարգի արտահայտման բազմամակարդակ միջոցների առանձնահատ-

կույթունների վերհանմանը: Աշխատանքում առանձին **նորույթ** է նաև համատեքստում ժխտման կարգի իրացման պայմանների քննությունը:

Առաջադրված խնդիրները քննվում են ընդհանուր համեմատությունների, գուգադրական, բաշխումային, փոխակերպման, համատեքստային և կառուցվածքային վերլուծության լեզվաբանական **մեթոդների** կիրառմամբ, որոնք հնարավորություն են տալիս պարզաբանել ժխտման կարգի իմաստաբանական դրսևորումները և համատեքստում ի հայտ եկող առանձնահատկությունները: Վերոհիշյալը պարզաբանվում է գեղարվեստական գրականությունից վերցված համապատասխան բնութագրական օրինակներով:

**Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը:**

Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել լեզվական կարգերի տիպաբանական յուրահատկությունների քննության, ասույթների ձևի և բովանդակության փոխհարաբերության, տեքստերի իմաստաբանական վերլուծության, ինչպես նաև տարբեր քերականական կարգերի համատեքստային նոր եղանակների բացահայտման գործում: Ուսումնասիրության արդյունքները գործնականում կարող են կիրառվել գերմաներենի, մասամբ նաև հայերենի տիպաբանությանը նվիրված բուհական դասընթացներում, առանձին հարցերի նորովի մեկնաբանման, ինչպես նաև թարգմանաբանական և լեզունների դասավանդման խնդիրների պարզաբանման գործընթացներում: Ուսումնասիրության որոշ խնդիրներ ունեն նաև ընդհանուր լեզվաբանական նշանակություն:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և գրականության ցանկից (151 էջ ընդհանուր ծավալով):

**Ներածության** մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, նշվում է ուսումնասիրության առարկան, նպատակները, գործադրված մեթոդները:

**Առաջին գլխում** («Ժխտման կարգի ուսումնասիրության հիմնական հայեցակետերը») քննարկվում են ժխտման կարգին առնչվող ընդհանուր հարցեր. ժխտման կարգը ներկայացվում է որպես փիլիսոփայական, տրամաբանական, հոգեբանական ուսումնասիրությունների առարկա: Ցույց է տրվում նշված բնագավառների ունեցած խոր ազդեցությունը լեզվական ժխտման ուսումնասիրության գործում: Միևնույն ժամանակ հիմնավորվում է այն դրույթը, որ փիլիսոփայական, տրամաբանական և հոգեբանական ժխտումը սահմանազատվում է լեզվական ժխտումից. վերջինս, ունենալով շփման եզրեր այնուհանդերձ առանձնանում է իր առավել ընդգրկուն ծավալով: Լեզվաբանության մեջ ժխտումը հանդես է գալիս որպես հաստատման հակադարձ կարգ: Այն դրսևորվում է ինչպես կառուցվածքային, այնպես էլ

իմաստաբանական մակարդակներում: Կառուցվածքային մակարդակում ժխտումը միշտ նշույթավորված է այսինքն՝ առկա են հատուկ ժխտական տարրեր, որոնց միջոցով ձևավորվում է ժխտման հարաբերությունը: Քննելով ժխտման կարգը իմաստագործառական տեսանկյունից՝ հնարավոր է դառնում վեր հանել նաև լեզվում առկա ժխտման արտահայտման ոչ բացահայտ միջոցները, ինչպես նաև «համատեքստային եղանակները», որոնք նույնպես կիրառվում են ժխտական տեղեկույթի հաղորդման գործառնությամբ և արտահայտում են բազմաբնույթ ժխտական հարաբերություններ: Ընդհանուր իմաստաբանական գործառնությամբ, ինչպես նշում է Ա. Վ. Բոնդարկոն, «այն առանցքն է, որի շուրջ խմբավորվում են տվյալ իմաստն արտահայտող բոլոր հնարավոր ձևաբանական, շարահյուսական, բառակազմական, բառային, ինչպես նաև համատեքստային միջոցները»<sup>3</sup>:

**Երկրորդ գլուխը** («Գերմաներենի ժխտման կարգի արտահայտման բացահայտ միջոցների տիպաբանական բնութագիրը») բաղկացած է երկու ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում** («Ժխտման կարգի արտահայտման բառակազմական միջոցները») քննության են առնվել գերմաներեն՝ *un-, miss-, a-, dis-, in-, ohn-, nicht-, -los, -frei, -leer, -arm*, հայերեն՝ *ան-, սպ-/սպա-, դժ-, չ-, տ-, -ստ* նախածանցներն ու վերջածանցները, որոնք սովորաբար դիտվում են որպես բառային ժխտման միջոցներ, մինչդեռ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված ածանցները հաճախ ընդլայնում են իրենց ազդեցության շրջանակը՝ կիրառվելով նաև մասնակի և ընդհանրական ժխտման գործառնություններով:

**Երկրորդ ենթագլխում** («Ժխտման արտահայտման ձևաբանական միջոցները և դրանց շարահյուսական գործառնությունները») ուսումնասիրության են ենթարկվել ժխտական մասնիկները (*nicht, nein/չ-, մի', ոչ/չ*), ժխտական դերանուններն ու մակբայները (*nichts, kein/e/er/s, niemand, nie, niemals, nimmer, nirgends, nirgendwo, nirgendwohin, nirgendwoher, keinesfalls, keineswegs/ոչինչ, ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի, երբեք, ոչ մի անգամ, ոչ մի տեղ, ոչ մի դեպքում/*), ժխտական կապերը (*ohne/անսնց/*), ժխտական շաղկապները (*nicht...sondern, kein...sondern, weder...noch, ohne...zu, ohne...daß/ոչ թե...(այլ), ո'չ...ո'չ (այլ), և ոչ (թե), այլ ոչ (թե), բայց ոչ, ո'չ...ո'չ/*):

*Nicht* ժխտական մասնիկը նախադասության մեջ կարող է հանդես գալ տարբեր դիրքերում՝ կիրառվելով թե՛ ընդհանրական, թե՛ մասնակի ժխտման գործառնություններով, և հաճախ ժխտական նախադասության տիպը բնորոշող գլխավոր հատկանիշը այդ ժխտականի գրաված դիրքն է: Մասնակի ժխտման

<sup>3</sup> Бондарко А. Б. Грамматическая категория и контекст, Л., Наука, 1971, с. 24.

դեպքում այն միշտ նախորդում է ժխտվող անդամին, իսկ ընդհանրական ժխտման դեպքում՝ ձգտում է դեպի նախադասության վերջը՝ ստորոգյալի հետ կազմելով «ժխտման շրջանակ» կամ նախորդում է «շրջանակը» եզրափակող անդամներին: Հայերենում համապատասխանաբար հանդես է գալիս չ-ժխտական մասնիկը, որով ձևավորվում են բայի ժխտական խոնարհման հարացույցի շարքերը: Նշված մասնիկով ձևավորվում են թե՛ ընդհանրական, և թե՛ մասնակի ժխտական նախադասություններ, ոչ ժխտական մասնիկով՝ մասնակի ժխտական նախադասություններ: Սակայն մասնակի ժխտման արտահայտման համակարգը հայերենում այնքան զարգացած չէ ինչպես գերմաներենում, ինչը պայմանավորված է ոչ ժխտական մասնիկի նախադասության անդամների հետ սահմանափակ գուգորդման հնարավորությամբ: Եթե գերմաներենում *nicht* ժխտական մասնիկը կարող է կիրառվել նախադասության ցանկացած անդամի հետ, ապա հայերենում ոչ ժխտականի կիրառությունը սահմանափակ է: Շատ դեպքերում դրա փոխարեն կիրառվում է չ-բայական ժխտական մասնիկը, և միայն տրամաբանական շեշտի միջոցով է ընդգծվում նախադասության մասնակի և ոչ ընդհանրական ժխտական բնույթը:

Ժխտման բառաքերականական միջոցների (ժխտական դերանունների ու մակբայների) վերլուծության արդյունքում գերմաներենի մենաժխտական համակարգը հստակորեն հակադրվում է հայերենի բազմաժխտական համակարգին: Գերմաներենում ժխտման բառաքերականական միջոցներն ինքնին կիրառվում են ժխտման գործառույթով, մինչդեռ հայերենում նշված միավորների առկայությունը նախադասության մեջ առաջ է բերում նաև չ-բայական ժխտական մասնիկի կիրառման անհրաժեշտություն: Ընդ որում, մենաժխտական և բազմաժխտական համակարգերը հարկ չէ դիտել որպես տվյալ լեզվի առավելություն կամ թերություն, այլ որպես լեզվի կառուցվածքային համակարգում հարաշարժ գործընթացի արդյունք, մի գործընթաց, որը պատմական զարգացման ընթացքում մշտապես ձգտում է լեզվական երևույթների արտահայտման առավել համապատասխան և ձկուն տարբերակների ստեղծմանը, լեզվի ներքին կառուցվածքի կատարելագործմանը: Հարկ է նշել, որ մենաժխտական և բազմաժխտական համակարգերը հավաստի են միայն լեզվի զարգացման տվյալ փուլի համար. բազմաթիվ լեզվական փաստեր ցույց են տալիս մենաժխտական համակարգից անցում բազմաժխտականին և ընդհակառակը:

Ձևաբանական մակարդակում ժխտում է արտահայտվում նաև *ohne/wunŕng/* կապի միջոցով, որն արտահայտում է որևէ առարկայի, երևույթի բացառում տվյալ գործողությունը կատարելու, նրան ենթարկվելու կամ որևէ հատկանիշ ունենալու տեսանկյունից: Գերմաներենում *ohne* նախդիրը պահանջում է հայցական հոլովով դրված գոյական, մինչդեռ հայերենում *wunŕng* կապը դրվում է սեռական և ուղղական հոլովների հետ, իսկ դերանուններն *wunŕng* կապի հետ



գործածվում են տրական հոլովով: Որոշ դեպքերում նշված ժխտականները համանշային շարքեր են կազմում ժխտական ածանցների հետ՝ *ohne Fehler=fehlerlos/waunig* սխալի=*ախալալ*: *Ohne/waunig*/ ժխտականը հիմնականում ասույթին հաղորդում է մասնակի ժխտական նշանակություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հանդես է գալիս որպես կայուն բառակապակցության բաղադրիչ տարր, օրինակ՝ *ohne Antwort lassen*→*nicht antworten/waunig* պատասխանի թողնել→չպատասխանել: Կիրառվելով *nicht/nz*/ ժխտական մասնիկի հետ՝ այն ասույթին հաղորդում է հաստատական նշանակություն:

Գերմաներենում ժխտական հարաբերություններ են արտահայտվում *nicht...sondern, kein...sondern, weder...noch, ohne...zu, ohne...daß*, իսկ հայերենում՝ *ոչ թե...(այլ), ոչ...ոչ (այլ), և ոչ (թե), այլ ոչ (թե), բայց ոչ, ոչ...ոչ* շաղկապների միջոցով: *Nicht...sondern, kein...sondern, und nicht, aber nicht/nz թե...(այլ), ոչ...ոչ (այլ), և ոչ (թե), այլ ոչ (թե), բայց ոչ*/ ժխտական ներհակություն արտահայտող համադասական կապակցությունների բաղադրիչներից մեկում՝ առաջինում կամ երկրորդում, ժխտվում է կա՛մ ենթական, կա՛մ դրան վերագրվող հատկանիշը, կա՛մ հատկանիշի հատկանիշը, եթե կա, կա՛մ բոլորը միասին, մյուսում հաստատվում է այն ամենը, ինչ ժխտվել է կից բաղադրիչում: Այս բարդ նախադասությունները երկբևեռ են և կազմում են փակ շարք: Ժխտումը և նրան համապատասխանող հաստատումը կարող են լինել ընդհանրական և մասնակի: *Weder...noch* կրկնադիր շաղկապի միջոցով ժխտական նշանակությունը տարածվում է թվարկվող առարկաների, հատկանիշների, գործողությունների վրա. ժխտվում են բազմակի ենթականեր, ստորոցյալներ, խնդիրներ և պարագաներ: Հայերենում համապատասխանաբար հանդես է գալիս *ոչ...ոչ* կրկնադիր շաղկապը: Ժխտվող բաղադրիչների քանակը ձևակազմորեն սահմանափակ չէ, այն կախված է տվյալ իրադրությունից, նյութի բովանդակությունից և տեղեկության ծավալման անհրաժեշտությունից: *Ohne...zu* շաղկապը հանդես է գալիս բայի անորոշ ձևերի հետ՝ ձևավորելով դերբայական դարձվածներ և արտահայտում է գործողության կատարման սահմանափակում, հետևաբար և՛ մասնակի ժխտում:

**Երրորդ գլուխը** («Ժխտման կարգի արտահայտման ոչ բացահայտ միջոցների տիպաբանական բնութագիրը») բաղկացած է չորս ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում** («Ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցները բառակազմական մակարդակում») քննության են առնվում ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ՝ *anti-, wider-, de-, ent-, bar-, -fern, außer-, falsch-, pseudo-, quasi-, fehl-, blau-, ab-, ex-, unter-* ածանցներն ու կիսաածանցները, որոնք բովանդակության պլանում ներակայում են տարբեր իմաստային հատկանիշներ՝ հակադրություն, հեռավորություն, կասկած, բացակայություն, անբավարարություն, դուրս լինելու գաղափար և այլն: Հայերենում նշված իմաստային

հատկանիշներն արտահայտվում են *հակ-, տար-, թեր-, ստոր-, արտ- անդր-, քաղ-* նախածանցներով: Քննարկվող լեզուներում բառակազմական տարբերությունները միայն ձևական բնույթի են, ինչպես օրինակ՝ *unter- anti-*, նախածանցներին համապատասխանում են հայերենի *ստոր-, հակ-* նախածանցները, իսկ դրանց գործառնությունը տեսանկյունից առանձնակի տարբերություններ չեն նկատվում: Երկու լեզուներում էլ ոչ բացահայտ ժխտում արտահայտող ածանցները կիրառվում են ինչպես բառային, այնպես էլ մասնակի ու ընդհանրական ժխտման գործառնություններով:

**Երկրորդ ենթագլխում** («Ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցները բառային մակարդակում») քննարկվում են թե՛ բառային միավորներ, և թե՛ բառի հետ միևնույն հարթության վրա գտնվող դարձվածքներ: Ընդ որում, այստեղ վերլուծության են ենթարկել այնպիսի կառույցներ, որոնց մեկնաբանությունը բացատրական բառարաններում տրվում է որևէ ժխտական ցուցիչով կամ այնպիսի բառային միավորով, որը ցույց է տալիս բովանդակության պլանում առկա «բացակայության» իմաստը: Բառային մակարդակում ոչ բացահայտ ժխտում են արտահայտում ձևաբանական տարբեր կաղապարներ ունեցող միավորներ՝ գոյականներ, ածականներ, բայեր և այլն, ինչպիսիք են գերմաներեն՝ *blind, fehlen, vergebens*, հայերեն՝ *կույր, բացակայել, իզուր* և այլն, որոնք բովանդակության պլանում արտահայտում են որևէ հատկանիշի, երևույթի, եղելության բացակայություն, որևէ գործողության իրականացման արգելք, դիմադրություն և այլն: Դրանք գործածվում են բառակազմական մակարդակում ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ միավորների համանմանությամբ և արտահայտում են բազմաբնույթ ժխտական հարաբերություններ:

Գերմաներենում, ինչպես նաև հայերենում բավականին տարածված են ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ ինչպես անվանողական, այնպես էլ հաղորդակցական բնույթի դարձվածքները, որոնցում ակնհայտ է ձևի և բովանդակության անհամապատասխանությունը, օրինակ՝ գերմաներեն՝ *zwischen Himmel und Erde schweben*→*keine bestimmte feste Stellung haben*, հայերեն՝ *բերանը ջուր աննել*→*չխոսել*: Ոչ բացահայտ ժխտական իմաստով դարձվածային միավորը պատկերավոր ներկայացնում է համատեքստի համապատասխան ժխտական տեղեկությունը, և հատկանշական է այն փաստը, որ համատեքստի ժխտական նշանակության ծավալը համընկնում է դարձվածային միավորի ժխտական նշանակության ծավալի հետ: Դա չի բխում համատեքստից. դարձվածային միավորը, որպես պատրաստի լեզվական միավոր, ինքն է ներմուծում համապատասխան ծավալի ժխտական նշանակությունը տվյալ համատեքստ: Միայն փոքրաթիվ, շարահյուսորեն ավարտուն տեսք չունեցող անվանական դարձվածքներ չեն ենթարկվում այս օրինաչափությանը: Ոչ բացահայտ ժխտում արտահայտող դարձվածքները, շնորհիվ իրենց հավելյալ

իմաստաբանական հատկանիշների, ասույթին հաղորդում են նաև որոշ եղանակավորող, հուզաարտահայտչական նրբերանգներ:

**Երրորդ ենթազխում** («Ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցները ձևաբանական մակարդակում») քննարկվում են ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ մասնիկներ, կապեր, շաղկապներ, ինչպես նաև Konjunktiv II-ը:

*Kaum* մասնիկը, որը հանդիսանում է հայերեն՝ *հազիվ, հազիվ թե, դժվար թե* երկբայական վերաբերականների համարժեքը, ժխտական նշանակություն է արտահայտում բովանդակության պլանում գործողության կատարման «բարդացված» հանգամանքների հաղորդման հաշվին, այն ասույթին հաղորդում է «քիչ հավանականության» ենթադրական նշանակություն: *Nur, bloß, lediglich/միայն, unсы, լոկ/* միավորները ասույթին ժխտական նշանակություն են հաղորդում մեկ առարկայի կամ հատկանիշի, երբեմն նույնիսկ գործողության ընդգծված առանձնացմամբ: *Zu/չափազանց/* միավորը ասույթում առկա իրադրությանը հաղորդում է սաստկացնող նշանակություն և ցույց է տալիս դրա անհամապատասխանությունը պահանջվող կամ ցանկալի գործողության իրականացման համար: Նշված մասնիկների ժխտական իմակը ի հայտ է գալիս միայն շարակարգում այլ անդամների հետ փոխհարաբերության արդյունքում: Այս դեպքում մեծ դեր է խաղում նաև համատեքստը, որը նախ նպաստում է «թաքնված» ժխտական իմակի բացահայտմանը, ապա իրականացնում է հաղորդվող ժխտական տեղեկության ծավալի որոշիչի գործառնությունը: Նշված մասնիկները ասույթին կարող են հաղորդել ինչպես ընդհանրական, այնպես էլ մասնակի ժխտական նշանակություն:

Ոչ բացահայտ ժխտում է արտահայտվում նաև բացառման, փոխարինության, հակառակ հիմունքի կապերով, ինչպիսիք են գերմաներեն՝ *außer, außerhalb, jenseits, bis auf, gegen, wider, an/statt*, հայերեն՝ *բացի, դուրս, զան, բացառությամբ, փոխարեն, փոխանակ, տեղ, տեղակ, հակառակ, դեմ, ընդդեմ, ի հեճուկս* և այլն: Նշված տարրերի ժխտական նշանակությունը բացահայտվում է համապատասխան շարահյուսական հարաբերությունների ձևավորման արդյունքում: Ընդ որում, ասույթում դրանք հանդես են գալիս որպես մասնակի ժխտման միջոցներ: Ոչ բացահայտ ընդհանրական ժխտական իմաստ են արտահայտում այն դեպքում, երբ հանդիսանում են բայական կայուն բառակապակցության բաղադրիչ տարրեր, օրինակ գերմաներեն *außer Betrieb sein* → *nicht funktionieren*, հայերեն՝ *դեմ վիներ* → *չհամաձայնել*:

Ձևաբանական մակարդակում, որպես ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցներ, հանդես են գալիս նաև՝ *an/statt...zu, bis, ehe, bevor, als, als ob, als wenn, wie wenn* շաղկապները: *An/statt...zu* շաղկապը ձևավորվել է *an/statt* նախդիրից *zu* մասնիկի հավելումով: Այն ասույթում նախորդում է բայի անորոշ ձևերին՝ ձևավորելով դերբայական դարձվածներ, և արտահայտում տվյալ գործողության փոխարինումը այլ գործողությամբ: Հայերենում համապա-

տասխանաբար հանդես են գալիս *փոխարեն*, *փոխանակ* բառերը, որոնք հավասարապես համարվում են թե՛ կապ, և թե՛ շաղկապ և արտահայտում են զիջման, փոխարինության իմաստներ: *Als, als ob, als wenn, wie wenn* շաղկապներով կառույցների գերադաս եզրում արտահայտված գործողությունը համեմատության մեջ է դրվում ստորադաս եզրում նշված գործողության հետ: Ընդ որում, ստորադաս եզրում ներկայացված համեմատելի գործողությունը, եղելությունը ինչ-որ բանով նման է գերադաս եզրում ասվածին, ինչ-որ ձևով կամ հատկանիշով հիշեցնում է այն, բայց ամբողջությամբ չի նույնանում նրա հետ: Հայերենում նման կառույցները ձևավորվում են *այնպես→կարծես (թե)*, *այնպես→ասես (թե)*, *այնպես→իբրև (թե)*, *այնպես→որպես (թե)* կաղապարներով, հաճախ՝ առանց առաջին եզրի՝ հարաբերալի: Հաղորդվող տեղեկության ժխտական նշանակությունն այս դեպքում հաճախ ապահովում է նաև բայի պայմանական եղանակը, որն ինքնին հանդիսանում է ժխտման արտահայտության ոչ բացահայտ միջոցներից մեկը: Նշված շաղկապներով արտահայտված ժխտական նշանակության ծավալը կարող է լինել ինչպես ընդհանրական, այնպես էլ մասնակի: Ոչ բացահայտության բարձր աստիճանով են առանձնանում գերմաներեն՝ *bis, ehe, bevor/մինչև, մինչև որ, մինչ, քանի դեռ, նախքան/* ժամանակային շաղկապները: Ժամանակի պարագա կախյալ նախադասությունը գերադաս նախադասության հետ կապակցելով՝ այս շաղկապները արտահայտում են տարածամասնակություն, այսինքն գերադաս և ստորադաս բաղադրիչների բայ-ստորոգյալների նշված գործողությունների, եղելությունների իրական ժամանակները չեն զուգադիպում:

Ձևաբանական մակարդակում ոչ բացահայտ ժխտման արտահայտման ինքնատիպ միջոց է բայի եղանակը, մասնավորապես գերմաներեն Konjunktiv-ը, որին հայերենում համաստասխանում են պայմանական և մասամբ՝ ըղձական եղանակները: Ընդ որում Präsens, Perfekt, Futur I ժամանակաձևերը ծառայում են որպես հնարավոր, մասամբ իրականանալի իղձերի, ցանկությունների և ենթադրությունների արտահայտման միջոցներ, իսկ Imperfekt, Plusquamperfekt, Futur II ժամանակաձևերը՝ անիրականանալի իղձերի, ցանկությունների, ենթադրությունների, հետևաբար՝ ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցներ:

**Չորրորդ ենթագլխում** («Ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցները շարահյուսական մակարդակում») քննության են առնվել հոետորական հարցերը, «շարահյուսական կաղապարները» և բացականչական նախադասությունները:

Չոետորական հարցերի հարցական բնույթը պայմանավորված է տվյալ գործողության տեղի չունենելու, երևույթի, իրողության առկա չլինելու գաղափարն ավելի շեշտելու, ասույթի միջուկն առավել ընդգծելու նպատակով, այսինքն՝ տվյալ դեպքում հարցադրումը հիմնականում ոճական արժեք ունի: Օրինակ՝

Was ist das alles gegen den Zauber

Ի՞նչ է այդ ամենը երևակայության

der Phantasie? /Remarque, 1965:65/.→ կախարդանքի դիմաց:→Այդ ամենը  
 Das alles ist *nichts* gegen den Zauber *nչհնչ* է երևակայության կախար-  
 der Phantasie. դանքի դիմաց:

Շարահյուսական մակարդակում ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցներից իրենց կայունությամբ առանձնանում են «շարահյուսական կաղապարները»: Արտահայտության պլանում այդ կառույցների բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը հանգեցնում է բովանդակության պլանում ընդհանուր նշանակության արմատական փոփոխությանը: «Շարահյուսական կաղապարների» միջոցով ժխտական նշանակության արտահայտումը ապահովվում է նաև համապատասխան հնչերանգով, ինչը նպաստում է նաև դրանց կողմնակի իմաստների, հարանշանակային կանխենթադրույթների դրսևորմանը.

Ns(p)+(und)+Gf/, Ns/, Adj

Du mich erwischen? /Remarque, Դու ինձ հանկարծակիի՞ քե-  
 1965:71/→Du kannst mich *nicht* բես:→Դու չես կարող ինձ  
 erwischen. հանկարծակիի բերել:

Nn1+V<sub>sein</sub>+alles andere als+Nn2/Adj

Er ist alles andere als Arzt.→Er ist Բժիշկ լինելուց բացի նա ամեն ինչ  
 keineswegs einen Arzt. է:→Նա ամենևին բժիշկ չէ:

Nn +V<sub>sein</sub>+zu+Adj, um...+zu+V<sub>inf</sub><sup>4</sup>

Er ist zu klein, um diese schwere Նա չափազանց փոքր է այս ծանր  
 Arbeit zu verrichten.→Er kann diese աշխատանքը կատարելու համար:  
 schwere Arbeit *nicht* verrichten. →Նա չի կարող այս ծանր աշխա-  
 տանքը կատարել:

Բացականչական նախադասությունների ժխտական նշանակությունը ընկալվում է ասույթում առկա կանխենթադրույթի, հատուկ (բացականչական) հնչերանգի և համատեքստի միջոցով: Օրինակ

“Wenn ich dir nur helfen könnte!” Եթե ես քեզ միայն օգնել

<sup>4</sup>(Nn)-ուղղական հոլովով դրված գոյական կամ դերանուն, sein V<sub>sein</sub>- օժանդակ բայի դիմավոր ձև, V<sub>inf</sub>-բայի անորոշ ձև, Adj-ածական, Gf-բայի հիմնական ձև:

/Remarque, 1965:171/. → Leider, könnte ich dir *nicht* helfen.

կարողանայի: → Ափսոս, ես քեզ չեմ կարող օգնել:

**Չորրորդ գլխում** ուսումնասիրության են ենթարկվել ժխտման կարգի իրացման առանձնահատկությունները տեքստի մակարդակում: Տեքստը իմաստով շաղկապված խոսքային միավորների հաջորդականություն է՝ մի բարդ կառուցվածքային և իմաստային ամբողջություն, որի հաղորդակցական ներուժն ավելին է, քան նրա առանձին ասույթների միասնությունը: Համատեքստը՝ խոսքային շղթայի՝ իմաստով և ձևով ավարտուն ամբողջականություն ներկայացնող հատված է, որի սահմաններում պարզորոշ նկատվում է նրա մեջ ներառվող լեզվական տարրերի, միավորների նշանակությունը: «Համատեքստային ժխտում» եզրույթով նկատի ունենք այն բոլոր դեպքերը, երբ ժխտական իմակը ի հայտ է գալիս որոշակի խիստ սահմանափակ համատեքստի շրջանակներում, համատեքստի միջուկի և եզրային բաղադրիչների փոխհարաբերության պայմաններում: Վերոհիշյալը քննարկվել է երկխոսություններում և պատմողական տեքստերում առանձին: Գերմաներենում, ինչպես նաև հայերենում պատմողական տեքստերում «համատեքստային ժխտումն» իրացվում է կրկնության, համեմատության, զուգադրության և «անիրական եղանակավորության» միջոցով, իսկ երկխոսություններում՝ կրկնության, հեզնանքի, «նկարագրական պատասխանի» և նշագրության (ռեմարկի) միջոցով:

Կրկնությունը բառի կամ կապակցության անմիջական կրկնությամբ առաջ եկող ձևն է: Այս արտահայտչամիջոցն ունի բազմաթիվ հնչյունական, բառաձևաբանական, շարահյուսական տեսակներ: Գոյություն ունեն նաև գաղափարի կրկնության մի շարք դրսևորումներ, վերջինս, ըստ էության, միևնույն հասկացության կրկնությունն է՝ լեզվական այլ ձևակերպմամբ: Որպես գաղափարի կրկնության միջոցներ համատեքստում ժխտման գործառույթով հանդես են գալիս դերանունները: Եթե նախորդ բաղադրիչ տարրը տեքստի անվանական անդամն ունի ժխտական նշանակություն (արտահայտված բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով), ապա հաջորդող դերանվանական անդամը, վերարտադրելով այն հաստատական ձևով, բովանդակության պլանում արտահայտում է միևնույն մասշտաբի ժխտական տեղեկույթ, ինչ որ արտահայտվում է անվանական անդամի միջոցով: Օրինակ՝

In der Ecke saßen zwei Kinder an einem Tisch und neben dem Herd *ein alter unrasierter Mann*, der in der Zeitung las, nun die Blätter senkte und mich ansah. [...] Als ich “Geld” sagte, stand *der alte Mann am Ofen* auf, kam

Անկյունում, մի սեղանի շուրջ նստած էին երկու երեխաներ, իսկ վառարանի մոտ՝ *մի ծեր չսափրված մարդ*, որը թերթ էր կարդում ահա իջեցրեց թերթը և ինձ նայեց: Երբ ես «Հաշիվը»

hinter die Theke [...] *Der alte Mann*  
häufte drei Kuchen auf einen Teller  
und brachte sie mir. *Er* blieb neben  
mir stehen. [...] *Er* lächelte mir zu...  
/Böll, 1964:91-92/.

ասացի, *վառարանի մոտի ծեր*  
*մարդը* կանգնեց և մոտեցավ  
վաճառասեղանին...*Շեր մարդը*  
երեք կտոր թխվածք դրեց ավսեի  
մեջ և բերեց ինձ համար: *Նա*  
կանգնած մնաց իմ կողքին:[...]  
*Նա* ինձ ծպտաց...

Որպես «համատեքստային ժխտման» միջոց կիրառվում է նաև ոճական մեկ այլ հնար՝ համեմատությունը: Համեմատությունները սովորաբար բաղկացած են երեք բաղադրիչներից՝ համեմատվող օբյեկտ (համեմատելի), այն օբյեկտը, որի հետ համեմատվում է (համեմատյալ) և համեմատության հիմքը՝ այն հատկանիշը, որի հիման վրա հարաբերակցվում են համեմատելին և համեմատյալը: Համեմատության միջոցով «համատեքստային ժխտման» արտահայտման պարտադիր նախապայման է համեմատվող օբյեկտում ժխտական նշանակության առկայությունը, որի հետ հարաբերակցվելով՝ համեմատյալը ամբողջությամբ վերարտադրում է այն: Օրինակ՝

Du weißt es auch nicht. Genau wie  
der Doktor! /Remarque, 1965:43/. →Der  
Doktor weißt es *nicht*.

Դու նույնպես դա չգիտես: Ճիշտ  
ինչպես բժիշկը: →Բժիշկը չգիտի դրա  
մասին:

«Համատեքստային համեմատության» արտահայտման գործարկիչներ են գերմաներեն՝ *wie, ähnlich, genauso, auf ähnliche Weise*, հայերեն՝ *ինչպես, նույն կերպ, նման, նմանապես, ճիշտ այդպես* և այլն բառերը:

Համատեքստում ժխտում է արտահայտվում նաև զուգադրության միջոցով: Այն կիրառվում է երկու կամ ավելի երևույթների նմանությունը կամ տարբերությունը ներակա ընդգծելու նպատակով: Զուգադրության միջոցով ժխտման արտահայտման նախապայման է համատեքստում երկու միմյանց բացառող փաստերի առկայությունը: Ընդ որում, այս դեպքում հաճախ են կիրառվում այնպիսի բառային միավորներ, ինչպիսիք են գերմաներեն՝ *im Gegenteil, anders, im Unterschied, aber, nur, jetzt//damals, hier//dort*, հայերեն՝ *ընդհակառակը, ի տարբերություն, մինչդեռ, սակայն, բայց, միայն, այժմ//այն ժամանակ, այստեղ//այնտեղ* և այլն, որոնք այս դեպքում համատեքստից դուրս կորցնում են իրենց ժխտական նշանակությունը, մինչդեռ նշված միավորները, որպես բառային մակարդակում ոչ բացահայտ ժխտման արտահայտման միջոցներ, պահպանում են (երբեմն աղոտ կերպով) իրենց ժխտական նշանակությունը նաև համատեքստի շրջանակներից դուրս:

Du bist ein [...] Opfer der Zeit. Lisa  
*dagegen* schwimmt mit vollen Segeln auf

Դու ժամանակի զոհ ես: Լիզան՝  
*ընդհակառակը*, բոլոր առագաստները

den Wogen der deutschen Inflation /Remarque, 1965:11/.→Lisa ist *kein* Opfer der Zeit.

պարզած լողում է գերմանական արժեզրկման ալիքների վրայով:→ Լիզան ժամանակի զոհ չէ:

Համատեքստում ժխտում է արտահայտվում նաև այսպես կոչված «անիրական եղանակավորության» միջոցով: «Անիրական եղանակավորման» առավել բնորոշ իմաստավորումներից են անհավաստիությունը, կասկածը, անվստահությունը, անհնարինությունը, անիրական ենթադրականությունը և այլն: Դրանք արտահայտում են ցանկալի, հնարավոր կամ պարտադիր կատարվելիք գործողության և օբյեկտիվ իրականության անհամապատասխանությունը, ինչը և նպաստավոր հարթակ է ժխտման կարգի դրսևորման համար: Ժխտումը, որն իրացվում է «անիրական եղանակավորության» գործառնության դաշտում, առանձնանում է վառ արտահայտված հուզաարտահայտչական նրբերանգներով: Օրինակ՝

Ich möchte ihm gerne antworten, daß Zeit ein wichtiger Faktor sei [...], aber ich ziehe vor, meinen Schnaps zu trinken /Remarque, 1965:61/.→Ich habe ihm *nicht* geantwortet.

Ես կուզենայի նրան հաճույքով պատասխանել, որ ժամանակը կարևոր գործոն է, բայց նախընտրեցի օղիս խմել:→Ես նրան չպատասխանեցի:

Երկխոսություններում «համատեքստային ժխտում» կարող է արտահայտվել կրկնության միջոցով, որի առանձնահատկությունները լիովին նույնանում են պատմողական տեքստերում ցուցաբերած առանձնահատկությունների հետ:

Ժխտման արտահայտման յուրօրինակ կառույցներ են ձևավորվում հատկապես հեզնանքի ոճաբանական հնարի միջոցով, ինչը գորեղ միջոց է տվյալ հատկանիշի, երևույթի բացակայությունը ավելի հստակ ընդգծելու և դրան հակառակ հատկանիշի, երևույթի առկայությունը շեշտելու համար: Օրինակ՝

“Schämen Sie sich nicht? Was war der Grund? Scherz, Ernst, Ironie oder einfache Verzweiflung?”

-Չե՞ք ամաչում: Ի՞նչն էր պատճառը: Կատակը, լրջությունը, հեզնանքը, թե՞ պարզ հուսահատությունը:

“Ein Stiftungsfest”, sagt Herbert.

-Հիմնադրման տարեդարձի տոնակատարությունը,- ասում է Հերբերտը:

[...]”Scherz beiseite!” sage ich. /Remarque, 1965:279/.→Der Grund war weder Scherz, noch Ernst, noch Ironie, noch einfache Verzweiflung.

-Կատակը մի կողմ,- ասում եմ ես: →Պատճառը ո՛չ կատակն էր, ո՛չ լրջությունը, ո՛չ հեզնանքը ո՛չ էլ



պարզ հուսահատությունը:

«Նկարագրական պատասխանները» ևս երկխոսություններում ժխտման արտահայտման ինքնատիպ միջոց են հանդիսանում: Այս դեպքում ևս պատասխան ասույթը ձևով հաստատական է, և վերջինիս ժխտական նշանակությունը բացահայտվում է նախորդ՝ խթանիչ ասույթի հետ հարաբերակցության արդյունքում: Օրինակ՝

“Kannst du den Schlips nicht morgen kaufen?”

-Դու չե՞ս կարող փողկապը վաղը գնել:

“Morgen ist Sonntag. Und morgen brauche ich ihn.” /Remarque, 1965: 11/.→Ich muss den Schlips nicht morgen, sondern heute kaufen.

-Վաղը կիրակի է: Եվ վաղն ինձ այն պետք է:→Ես փողկապը ոչ թե վաղը, այլ այսօր պետք է գնեմ:

Երկխոսություններում ժխտական նշանակությամբ պատասխան ասույթի դեր են կատարում նաև խոսակցի բացասական վերաբերմունքն արտահայտող վարքը՝ ժեստերը և դիմաշարժությունը, որոնք նույնպես տեղեկույթ են հաղորդում և հաճախ ավելի խոսուն են: Գրավոր խոսքում հաղորդակցման գործընթացի ամբողջականությունը պահպանվում է հարալեզվական միջոցների նկարագրությամբ. խոսակցի վարքը նկարագրվում է նշագրության (ռեմարկի) միջոցով: Օրինակ՝

“Suchen Sie jemand?”

-Դուք ինչ-որ մեկի՞ն եք փնտրում:

Ich schüttelte den Kopf /Böll,1964:62/.→ Ich suche niemand.

Ես շարժեցի գլուխս:→Ես ոչ ոքի չեմ փնտրում:

«Համատեքստային ժխտման» ծավալը կարող է լինել ընդհանրական, մասնակի և բառային: Ընդ որում բառային ժխտում է արտահայտվում միայն կրկնության միջոցով, մինչդեռ ընդհանրական և մասնակի ժխտական նշանակություն կարող է արտահայտվել նշված բոլոր դեպքերում:

**Եզրակացության** մեջ ի մի են բերվում ուսումնասիրության արդյունքները:

1. Գերմաներենում ժխտման իմաստաբանական-գործառական դաշտը ներառում է բազմամակարդակ բացահայտ և ոչ բացահայտ քերականական, բառային, բառակազմական, ինչպես նաև «համատեքստային» միջոցներ, որոնք թեև տարբերվում են իրենց ձևաբանական, շարահյուսական առանձնահատկություններով, միասեռ չեն իրենց դրսևորած հատկանիշներով, այնուհանդերձ միավորվում են մեկ կարգի ներքո, քանզի դրանցից

յուրաքանչյուրը բովանդակության պլանում ներակայում է ժխտական իմակ, որն արտահայտության պլանում դրսևորվում է լեզվական տարբեր միջոցներով: Նշված միջոցները մեկ ընդհանուր համակարգի բաղադրիչ տարբեր են և հավասարապես կիրառվում են ժխտական տեղեկույթի հաղորդման գործառույթով:

2. Բացահայտ ժխտման արտահայտվում է լեզվական տարբեր մակարդակներում: Բացահայտությունը ենթադրում է իմաստի բաց, ակնհայտ, անմիջական արտահայտման միջոցներ: Բառակազմական մակարդակում բացահայտ ժխտման արտահայտման միջոցները ժխտական նախածանցներն ու վերջածանցներն են, ձևաբանական մակարդակում՝ ժխտական մասնիկները, ժխտման բառաքերականական միջոցները (ժխտական դերանունները, մակբայները), ժխտական կապերն ու շաղկապները:

3. Թեև ծագումնաբանորեն գերմաներենը և հայերենը պատկանում են նույն լեզվաընտանիքին, սակայն դրանց պատմական զարգացման արդյունքում ձևավորվել են ընդհանուր առմամբ ժխտման տարբեր համակարգեր (գերմաներենում՝ մենաժխտական, հայերենում՝ բազմաժխտական): Գերմաներենում ժխտման արտահայտման բառաքերականական միջոցները նախադասության մեջ ժխտական իմաստ են հաղորդում ձևով հաստատական ստորոգյալին: Հայերենում դրանք, որպես կանոն, կիրառվում են բայի ժխտական ձևերի հետ: Ընդ որում, հայերենում ժխտման արտահայտման նշված միջոցները առաջնային են, քանի որ դրանց առկայությունը ասույթում առաջ է բերում բայի ժխտական ձևերի գործածման անհրաժեշտություն, մինչդեռ հակառակ երևույթը հատկանշական չէ:

4. Եթե հայերենի համար համապատասխան ժխտական նշանակության արտահայտման համար առաջնային է ձևաբանական մակարդակում ժխտական մասնիկի ձևակազմական առանձնահատկությունները (ի տարբերություն գերմաներենի, որտեղ բայը չունի հատուկ ժխտական խոնարհում, հայերենում չմասնիկն առաջին հերթին իրականացնում է ժխտական բայաձևերի կազմման գործառույթը, որի արդյունքում կատարվող փոփոխությունները լիովին նույնանում են ձևաբանական մակարդակում բայի ժխտական խոնարհման հարացույցի օրինաչափություններին), ապա այլ է պատկերը գերմաներենում, որտեղ ավելի առաջնային են համարվում ոչ ժխտական մասնիկի շարահյուսական գործառույթները, նախադասության մեջ ունեցած հնարավոր դիրքերը:

5. Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ժխտման կարգի գործառույթի տեսակետից գերմաներենում և հայերենում տարբերություններ չեն նկատվում: Գործառական պլանում ժխտման արտահայտման բազմամակարդակ միջոցները ենթարկվում են մեկ ընդհանուր օրինաչափության՝ հավասարապես կիրառվելով ընդհանրական, մասնակի և բառային ժխտման գործառույթներով:

Բացառություն են կազմում միայն ձևաբանական և շարահյուսական մակարդակում ժխտման արտահայտման միջոցները, որոնք, ունենալով քերականացման բարձր աստիճան, առանձին միավորների ժխտման գործառնություն չեն կիրառվում և հանդես են գալիս միայն որպես ընդհանրական և մասնակի ժխտման միջոցներ: Ժխտման ծավալի որոշման գործում կարևոր դեր են կատարում նաև համատեքստային տվյալները: Վերլուծությունից պարզվում է, որ հայերենն այն լեզուներից է, որը թերևս ի գորու է առավելագույն չափով արտացոլելու գեմաներենի ժխտման կարգի տիպաբանական առանձնահատկությունները՝ անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելով այդ լեզվի առավել արդյունավետ ուսումնասիրության համար:

6. Հաստատման և ժխտման միկրոդաշտերի հատման եզրագծում, որպես նոր, վերաիմաստավորված կառույցներ, հանդես են գալիս ոչ բացահայտ ժխտական կառույցները, որոնց ժխտական նշանակությունը ձեռք է բերվում համատեքստային տվյալների ազդեցությամբ, այլ կերպ ասած, համատեքստը դրանց հնարավորություն է ընձեռում իրենց առաջնային, հիմնական գործառնությունից բացի կիրառվել նաև ժխտման գործառնություն, վերջինս հաճախ հանդես է գալիս եղանակավորող նրբիմաստների հետ միահյուսված: Բառակազմական մակարդակում ոչ բացահայտ ժխտումն արտահայտվում է որոշ ածանցների և կիսաածանցների միջոցով, որոնք ունեն հակադրության, բացակայության, դուրս լինելու, կեղծ, թերի լինելու իմաստային հատկանիշներ, որոնք և կատարյալ հարթակ են հանդիսանում ժխտական իմակի դրսևորման համար: Ընդ որում, այս դեպքում կարևոր է նաև բառահիմքի նշանակությունը, քանի որ հիմքի և ածանցի նշանակության փոխներթափանցման արդյունքում է ձևավորվում համապատասխան նշանակությունը: Բառային մակարդակում ոչ բացահայտ ժխտումն իրացվում է ձևաբանական տարբեր կաղապարներ ունեցող բառերի և բառի հետ միևնույն հարթության վրա գտնվող դարձվածքների միջոցով: Ձևաբանական մակարդակում այն արտահայտվում է որոշ մասնիկների, կապերի, շաղկապների, բայի ըղձական եղանակի, իսկ շարահյուսական մակարդակում՝ հոռետրական (ճարտասանական) հարցերի, բացականչական նախադասությունների, «շարահյուսական կաղապարների» միջոցով:

7. Բացահայտ միջոցները համընդհանուր են և միանշանակ, մինչդեռ ոչ բացահայտ միջոցները կարող են բազմանշանակ լինել և ունենալ հավելյալ իմաստաբանական հատկանիշներ, օժտված լինել հուզաարտահայտչական նրբերանգներով, ինչի արդյունքում հաճախ ժխտման արտահայտման բացահայտ և ոչ բացահայտ միջոցները փոխադարձաբար փոխարինելի չեն կարող լինել: Ոչ բացահայտ ժխտական միավորի իմաստաբանական դաշտն ավելի «ծանրաբեռնված» է:

8. Խոսքային մակարդակում ժխտումը կարող է դրսևորվել ոչ միայն հակադիր իմաստ արտահայտող միավորներով: Համատեքստն այս դեպքում հանդես է գալիս ոչ որպես ժխտական նշանակության ծավալի որոշման լրացուցիչ գործոն, այլ դրա «առաջացմանը նպաստող միջավայր», որտեղ ժխտումը տեղակայված է ոչ թե նրա առանձին ասույթներում, այլ խորքային կառուցվածքում և ի հայտ է գալիս տվյալ կոնկրետ բովանդակային տվյալների ասկայությամբ՝ համատեքստի միջուկի և եզրային բաղադրիչների փոխհարաբերության արդյունքում: Պատմողական տեքստերում, որպես «համատեքստային ժխտման» միջոցներ, հանդես են գալիս՝ կրկնությունը, համեմատությունը, զուգադրությունը և «անիրական եղանակավորությունը», իսկ երկխոսություններում՝ կրկնությունը, հեզնանքը, «նկարագրական պատասխանը» և նշագրությունը (ռեմարկը):

9. Գործառական-իմաստաբանական տեսանկյունից գերմաներենի ժխտման կարգի արտահայտման բազմամակարդակ միջոցների տիպաբանական առանձնահատկությունների վերլուծությունը թույլ է տալիս կրկին անգամ ընդգծել լեզվական ժխտման մեջ առկա քերականական, իմաստաբանական և տրամաբանական տարրերի միահյուսումը, որով մեկ անգամ ևս հիմնավորվում է ժխտման կարգի բազմակիությունն ու ներքին բարդ բնույթը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Շաչիլվյան Ն.Ա., Ժխտման կարգի ընթրման հիմնական հայեցակետերը // Լեզու և լեզվաբանություն, Երևան, Զանգակ-97, 2008, №1(8), էջ 77-83:

2. Շաչիլվյան Ն.Ա., Ընդհանուր և մասնակի ժխտական նախադասությունները ժամանակակից գերմաներենում և հայերենում // Օտար լեզուները Հայաստանում, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2008, №3-4, էջ 25-40:

3. Շաչիլվյան Ն.Ա., Ժխտման ոչ բացահայտ միջոցները ժամանակակից գերմաներենում և հայերենում // Օտար լեզուները Հայաստանում, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2010, №3, էջ 40-51:

4. Շաչիլվյան Ն.Ա., Համատեքստային ժխտման միջոցները գերմաներենում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, №12, էջ 123-134 :

Наира Арамаисовна Шачилвян

## ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КАТЕГОРИИ ОТРИЦАНИЯ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по  
специальности Ж.02.07 «Германские языки»

Защита состоится 20-го апреля 2012г. в 15.00 на заседании  
специализированного совета 009 при Ереванском государственном университете  
(Ереван, Алека Манукяна 1).

### Резюме

**Объектом** изучения реферируемой диссертационной работы являются типологические особенности категории отрицания современного немецкого языка.

**Цель** исследования – системный анализ многоуровневых эксплицитных и имплицитных средств категории отрицания современного немецкого языка на основе новейших принципов типологии. Используя в работе анкетный и эталонный принципы одновременно, типологические особенности категории отрицания немецкого языка представлены как на основе внутриязыковых закономерностей, так и в сопоставлении с соответствующими фактами армянского языка. Для достижения цели исследования в работе ставятся и решаются следующие **задачи**:

1. описание существующих теорий и подходов к категории отрицания;
2. анализ эксплицитных и имплицитных средств выражения категории отрицания на основе типологических принципов и определение их функционально-семантических особенностей;
3. выявление стилистических особенностей имплицитных средств отрицания;
4. установление функционального объема отрицательной информации с учетом контекстуальных данных, а также экстралингвистических и паралингвистических факторов;
5. исследование условий реализации категории отрицания в контексте.

Исследование базируется на **методах** структурного, компонентного контекстуального, трансформационного и сопоставительного анализов.

**Актуальность** темы обусловлена тем, что на современном этапе развития языкознания важными становятся теории по типологии языков, так как исследуемые теоретические и практические проблемы конкретного языка более продуктивно совмещаются в исследованиях типологического характера, которые дают возможность наибольшего обобщения особенностей языковых явлений.

**Новизна** исследования заключается в том, что впервые в работе, с одной стороны, представлено системное описание всего корпуса эксплицитных и

имплицитных средств и способов реализации категории отрицания в немецком языке с функционально-семантической точки зрения, с другой стороны, анализируются типологические особенности отрицания немецкого на основе новейших типологических теорий, в частности, при одновременном применении эталонного и анкетного принципов. Эталонным языком в данном исследовании является армянский. Сопоставление с фактами армянского языка дало возможность наиболее наглядно и цельно представить сущность категории отрицания в немецком языке. **Новизной** исследования также является анализ условий реализации категории отрицания в контексте.

Данная работа состоит из введения, четырех глав, заключения и списка использованной научной и художественной литературы, а также списка словарей.

В **введении** обоснованы актуальность, теоретическая и практическая значимость исследуемой проблемы, определены цель и задачи, научная новизна, методы исследования и структура работы.

В **первой главе** рассматриваются различные точки зрения о сущности отрицания. Отрицание рассматривается как объект философских, логических, психологических и лингвистических исследований. В этой же главе представлены общие типологические характеристики немецкого и армянского языков.

**Вторая глава** посвящена исследованию типологических особенностей разноуровневых эксплицитных средств отрицания в немецком языке в сопоставлении с фактами армянского языка. Мононегативность немецкого языка становится более наглядной в сопоставлении с фактами полинегативного армянского языка.

**Третья глава** посвящена анализу типологических особенностей имплицитных средств категории отрицания на деривационном, лексическом, морфологическом, синтаксическом уровнях немецкого языка в сопоставлении с фактами армянского.

В **четвертой главе** исследуются условия реализации категории отрицания в контексте. В данном случае отрицательная сема проявляется в строго ограниченных рамках контекста в результате взаимоотношения ядра контекста и маргинальных компонентов.

В **заключении** обобщаются результаты исследования.

## THE TYPOLOGICAL PECULIARITIES OF THE CATEGORY OF NEGATION IN GERMAN

### Summary

The **object** of the present thesis is the typological peculiarities of the category of negation in modern German.

The research is **aimed** at analyzing the whole system of explicit and implicit means of the category of negation in modern German from the functional and semantic perspectives applying the modern typological principles. Applying questionnaire and etalon principles simultaneously the typological peculiarities of the category of negation are revealed with intralingual regularities and with corresponding facts of the Armenian language as well. The following **objectives** are set forth to achieve the goal of the research: 1. to describe the theories and approaches revealing the nature of the category of negation; 2. to analyze the explicit and implicit means of negation at different levels of the German language with the application of typological principles, to interpret their semantic and functional peculiarities; 3. to reveal the stylistic nuances of implicit means of negation; 4. to determine the functional “volume” of negative information, taking into account the role of extralinguistic and paralinguistic factors; 5. to analyze the contextual conditions of the realization of the category of negation.

The study is based on the following **methods**: the methods of structural, componential, contextual, transformational and contrastive analysis.

The theme of this study is considered **topical** as at the present stage of development of linguistics the typological theories of languages are very important: the theoretical and practical problems of languages are more efficiently combined in typological studies, which allows the generalization of different peculiarities of linguistic phenomena.

The **novelty** of the research is, on the one hand, the systematic description of all explicit and implicit means of the category of negation at different levels of the German language and, on the other hand, the study of typological peculiarities of the category of negation applying the modern typological principles, in particular the simultaneous application of questionnaire and etalon principles, the etalon language being Armenian. The contrastive analysis reveals the essence of the category of negation in German more effectively and presents its complete linguistic characterization at different levels. In addition, the contextual conditions of realization of negation category are examined for the **first time**.

The paper consists of an introduction, four chapters, conclusion and bibliography.

The **introduction** presents the object, the theoretical and methodological framework, the goals and objectives, the topical issues and novelty, the theoretical and practical significance of the research and the structure of the paper.

**Chapter 1** presents different aspects studying the essence of negation category. The negation is observed as an object of philosophical, logical, phsychological and linguistic studies. The typological descriptions of the German and Armenian languages are also examined here.

**Chapter 2** is devoted to the typological peculiarities of the explicit means of the category of negation at different levels of German involving the corresponding facts of Armenian. The mononegative type of German becomes more obvious in the contrastive analysis with the facts of polynegative Armenian. The syntactical functions of the mentioned language means are also being analyzed.

**Chapter 3** presents the analysis of the peculiarities of the implicit means expressing the category of negation at derivational, lexical, morphological and syntactical levels of the German language including the corresponding facts of Armenian.

**Chapter 4** examines the peculiarities of the category of negation in context. In this case the negative seme is in the underlying structure of a certain context and can be revealed due to the interrelation of nuclear and marginal components of the context.

The **conclusion** presents the main findings of the study.







